



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ**

«26» դեկտեմբերի 2016թ.

№ 283-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

(լրացված և փոփոխված Է ՀՀ ՊԵԿ նախագահի 25.09.2018թ. թիվ 572-Ա հրամանով)

«ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ

**ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի №
14-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել.

1) «Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի որոշման և օրինապահ հարկ վճարող-ներին հավաստագրերի տրամադրման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն հավելված N 1-ի,

2) օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար հարկային մարմին ներկայացվող դիմումի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի,

3) օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար հարկ վճարողի կողմից ներկայացված դիմումում առկա անճշտությունների (անհամապատասխանությունների) վերաբերյալ հարկ վճարողին ներկայացվող ծանուցման ձևը՝ համաձայն հավելված N3-ի,

4) օրինապահ հարկ վճարողի հավաստագրի ձևը՝ համաձայն հավելված N4-ի:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետին՝

1) ապահովել հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար հարկ վճարողների դիմումների ներկայացման հնարավորությունը,

2) ապահովել Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների պաշտոնական ինտերնետային կայքում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստացած հարկ վճարողների ցանկերի հրապարակումը:

3. Կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

Ապահովել օրինապահ հարկ վճարողի հավաստագրի ձևավորման և տպագրման աշխատանքները:

4. Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

Զանգվածային լրատվության միջոցներով իրականացնել լայնածավալ իրազեկման աշխատանքներ՝ օրինապահ հարկ վճարողներին հավաստագրերի տրամադրման կարգի վերաբերյալ:

5. Ուժը կորցրած ճանաչել Կոմիտեի նախագահի 2013 թվականի հունվարի 11-ի ««Օրինապահ» հարկ վճարողների ցանկի ձևավորման մասին» № 14-Ա հրամանը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ԿԱՐԳ

«ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի որոշման, օրինապահ հարկ վճարողների կողմից հավաստագրեր ստանալու նպատակով հարկային մարմին դիմումների ներկայացման և հարկային մարմնի կողմից հավաստագրերի տրամադրման հետ կապված հարցերը:

2. Օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրումը հաշվետու ժամանակաշրջանում հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողի կողմից իրականացված փաստացի գործունեության իրավաչափության վերաբերյալ, նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա, Կոմիտեի պաշտոնական հավաստումն է:

II. ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3. Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու նպատակով՝ հարկ վճարողը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն հրամանի հավելված N 2-ով սահմանվող ձևի:

4. Հարկ վճարողը օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու համար դիմումը ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործունեության արդյունքներով:

5. Սույն կարգի իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջան է համարվում դիմումը ներկայացնելու օրն ընդգրկող հաշվետու տարվան նախորդող տարվա հունվարից մինչև դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող ամիսը ներառող ժամանակահատվածը:

6. Սույն կարգի իմաստով՝ հարկ վճարողը համարվում է փաստացի գործունեություն իրականացրած, եթե հարկ վճարողը հաշվետու ժամանակաշրջանի կեսից ավելի ժամանակահատվածի համար հայտարարագրել է Օ-ից մեծ իրացման շրջանառության գումար:

7. Օրինապահ հարկ վճարող համարվելու համար հարկ վճարողը հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով պետք է բավարարի հետևյալ չափանիշներին, եթե սույն կարգով այլ բան սահմանված չէ.

1) հարկային և մաքսային մարմիններ օրենսդրությամբ նախատեսված հաշվարկների (հաշվետվությունների), այլ փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացում (այդ թվում՝ նախկինում չներկայացրած հաշվարկների, փաստաթղթերի, տեղեկությունների մասով)՝ սահմանված կարգով և ժամկետներում,

2) հարկերի, տուրքերի և (կամ) վճարների (այդ թվում՝ կանխավճարների) վճարում օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում,

3) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային և մաքսային մարմինների կողմից հաշվառվող, ՀՀ պետական բյուջեի հանդեպ ժամկետանց պարտավորությունների բացակայություն (հարկ, տուրք, վճար, տույժ, տուգանք),

4) հարկային և մաքսային մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրած իրավախախտումների բացակայություն (այդ թվում, երբ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ստուգումների ժամանակ ստուգվել է հաշվետու ժամանակաշրջանից տարբերվող ժամանակաշրջան),

Հարկ վճարողի կողմից դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ պետք է ներկայացված լինեն հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող բոլոր հարկային հաշվարկները, իսկ ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները՝ կատարված, եթե դրանց կատարման վերջնաժամկետը լրացել է:

Սույն կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված չափանիշներին բավարարելու նպատակով՝ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրված իրավախախտումներն անտեսվում են, եթե դրանց արդյունքում հաշվարկված կամ հարկային մարմինների կողմից լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հանրագումարը չի գերազանցում հաշվետու ժամանակաշրջանի համար հարկ վճարողի կողմից ներկայացված հաշվարկներում արտացոլված իրացման շրջանառության 0.05%-ը:

III. ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

8. (ուժը կորցրած է)

9. Կոմիտեի ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչությունը հարկ վճարողների կողմից ներկայացված դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հարկ վճարողների ներկայացրած դիմումները, համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով՝ հարցումներ է ուղարկում Կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչություն, իրավաբանական վարչություն, հետաքննության վարչություն, քննչական վարչություն, օպերատիվ հետախուզության վարչություն, ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն, մաքսային հսկողության վարչություն: Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումները հարկ վճարողների վերաբերյալ հարցումները ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան տեղեկատվությունը ներկայացնում են Կոմիտեի ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչություն:

10. Կոմիտեի ռիսկերի կառավարման և հարկային կարգապահության ծրագրերի վարչությունը սույն կարգի 9-րդ կետով նախատեսված տեղեկությունները ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի նախագահի ստորագրմանն է ներկայացնում օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը կամ հայտնաբերված անճշտությունների (անհամապատասխանությունների) մասին ծանուցում հարկ վճարողին՝ համաձայն սույն հրամանի հավելված N 3-ով սահմանվող ձևի: Հարկ վճարողը ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ներկայացնել առարկություններ՝ ծանուցման մեջ նշված հիմնավորումների վերաբերյալ: Հարկ վճարողի կողմից ներկայացված առարկությունները հիմնավոր համարվելու դեպքում՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի նախագահի ստորագրմանն է ներկայացվում օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը: Հարկ վճարողի կողմից ներկայացված առարկությունները հիմնավոր չհամարվելու դեպքում օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրումը մերժվում է:

11. Կոմիտեի նախագահի կողմից ստորագրված օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը 1 աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության միջոցով հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում և հարկ վճարողի պահանջի դեպքում՝ նույն օրն առձեռն տրամադրվում է վերջինիս՝ համաձայն սույն հրամանի հավելված N 4-ով սահմանվող ձևի:

12. Հարկ վճարողին տրամադրված օրինապահ հարկ վճարողի հավաստագիրն ուժի մեջ է հավաստագրի տրման օրվանից մինչև հավաստագրի տրման եռամսյակին հաջորդող եռամսյակի վերջին օրվա ավարտը:

ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

1. Առևտրային կազմակերպության անվանումը _____
2. Անհատ ձեռնարկատիրոջ _____
անունը, ազգանունը
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը _____
4. Հարկ վճարողի գործունեության _____
իրականացման վայրը
5. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
6. Հարկ վճարողի գործունեության իրականացման ոլորտ(ներ)ը

Գործունեության տեսակը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչի					Գործունեության ոլորտը	Տեսակարար կշիռը, (%)
բաժին	հատված	խումբ	դաս	ենթադաս		

7. Հաշվետու ժամանակաշրջանը _____
սկիզբը _____ ավարտ _____
8. Գործունեության իրականացման ժամանակահատվածը _____
սկիզբը _____ ավարտ _____
9. Հարկ վճարողի հեռախոսահամարը _____
10. Հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեն _____

Սույնով **հայտարարում եմ, որ** դիմումը ներկայացնելու օրն ընդգրկող հաշվետու տարվան նախորդող տարվա հունվարից մինչև դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող ամսվա ընթացքում փաստացի գործունեության արդյունքներով իրավախախտումներ թույլ չեմ տվել, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ պարտավորություններ չունեմ, հարկային մարմին ներկայացրած տվյալները **ճշգրիտ են և ամբողջական**, ուստի խնդրում եմ տրամադրել օրինապահ հարկ վճարողի հավաստագիր և այն հրապարակել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում:

Կազմակերպության տնօրեն
(անհատ ձեռնարկատեր)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ամիս, ամսաթիվ

ԾԱՆՈԹՄԱՆ ՁԵՎ

**ՕՐԻՆԱԴԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՈՒՄ ԱՌԿԱ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ**

/կազմակերպության անվանում
(անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն), կազմակերպաիրավական տեսակ, ՀՎՀՀ/

/կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (բնակության) հասցե

Հարգելի հարկ վճարող

Սույնով տեղեկացնում ենք, որ _____ չի բավարարում ««Օրինապահ հարկ
(կազմակերպության անվանում)

վճարող» կարգավիճակի որոշման և օրինապահ հարկ վճարողներին հավաստագրերի
տրամադրման» կարգի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

ա.

բ.

գ.

Դուք իրավունք ունեք մինչև ս.թ. ---- ներկայացնել առարկություններ՝ վերը նշված
հիմնավորումների վերաբերյալ:

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՁԵՎ
ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ



ՀԱՎԱՍՏԱԳՐԻ
ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ
ՏՐՎՈՒՄ Է

----- ին
Հարկ վճարողի անվանում (անուն, ազգանուն), ՀՎՀՀ

ԱՌ ԱՅՆ, ՈՐ

Հարկ վճարողը 201_ թվականի _____ -ից 201_ թվականի _____ -ն ընկած ժամանակա-
(ամիս) (օր) (ամիս) (օր)
հատվածում՝

- գործունեություն է իրականացրել _____
(նշել առավելագույն տեսակարար կշիռ ունեցող երեք ոլորտները)
_____ ոլորտ(ներ)ում,
- սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին է ներկայացրել օրենսդրությամբ
նախատեսված բոլոր հաշվարկները (հաշվետվությունները),
- կատարել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ բոլոր
պարտավորությունները,
- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից հարկ վճարողի մոտ
իրավախախտումներ չեն արձանագրվել:

Տրվել է _____
(օր, ամիս, տարեթիվ)

Ուժի մեջ է մինչև _____
(օր, ամիս, տարեթիվ)

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ _____

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)